

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն).

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լիզուով.

Յայտարարութիւններէ համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Թանգոյան եկեղեցու քահանայ հանգուցեալ

ՏԵՐ-ԵՍԱՅԻ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ

որդիները—Նիկողայոս և կապիտան Յարութիւն Յայեանները իրանց կանանցով—Սօֆիա Յարութիւնեանը և Նատալիա Միքայելեանը, դուստրները—Եղիսաբէթ Յայեանեանը, Մարիամ Յայեան Սօսեանցը և Աննա Յայեան Բաշէղուի-Մէլիքեանցը իրանց ամուսիններով յայտնուած են իրանց խորին շնորհակալութիւնը՝ Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սաթուկեանցին, Կորիւն վարդապետ Սահակեանցին, հոգևորականներին, ծխականներին, ազգականներին և ծանօթներին, որոնք իրանց ներկայութեամբ պատուելի էին հանգուցեալի յուղարկաւորութիւնը: 1—1

Կիրակի, դեկտեմբերի 12 ին

ՄԱՐԻԱ ՍԱՎԵԼԷՎՆԱ ԽԱՆՁԱԼԱՋԷԻ

(Մոնեալ Մանվելովա)

մահվան քառասորեայ տարեդարձի օրը Թանգոյան ս. Աստուածածին եկեղեցու (Միքայելեան փող. բնակարանի դիմաց) կը կատարվի պատարագ և հոգեհանգիստ, որի մասին յայտնուած են ազգականներին և ծանօթներին ամուսին Պետր Եղօրովիչ Խանջալաճէն, Եկատերինա Եղօրովիչ, Ստեփան և Իվան Սավելևիչ Մանվելովները, Սօֆիա Սավելևիչ և Իօսիֆ Ղազկուլիճէ: (1—2)

ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմէ. Լայն հօրեղօններ.
—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աշուղ Համբ. Յալ-կայից Թիֆլիս բերվող ջրանցքի մասին. Դե-րասանուհի Տէրեան-Լորդեանեան. Նամակ Երե-ւանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մենք խնդրում ենք մեր բաժանորդ-ներին գրել իրանց հասցէները պարզ և ուղի, որպէս զի կարող լինենք ապագային նրանց ճիշդ կերպով և ազատ լինենք թիրիմացութիւններէ, որոնք առաջ են զայիս հասցէների անորոշ և խառն լի-նելուց:

Թող մեր բաժանորդները շատապէս ուղարկելու վաղօրք իրանց հասցէները: Դեկտեմբերի վերջին և յունվարի սկզբին տօնելի պատճառով ապարանները շատ օրեր փակված են լինում, իսկ բանուկ օրերը ծանրաբեռնված են լինում պա-տուէրներով, ուստի հասցէների տպա-գրութիւնը դանդաղութեամբ է կատար-վում: Բացի այդ հասցէները պատից ստանալը, նրանց ցուցակագրելը ժամա-նակ է պահանջում: Մենք հրաւիրելով մեր բաժանորդներին ուղարկութիւնը այդ հանգամանքի վրա, խնդրում ենք չուշաց-նել հասցէների ուղարկելը, որովհետեւ թէ խմբագրութեան գործը դիւրացված կը լինի և թէ բաժանորդներին հնարա-ւորութիւն տրված կը լինի առանց ու-շանալու և ընդմիջումի ստանալ լրագրի համարները:

Չը նայելով մեր յորդորներին՝ հասցէ-ներին ստանալը ամեն տարի ուշանում է: Մենք կարեւոր համարեցինք նորից յիշեց-նել մեր բաժանորդներին այդ հանգա-մանքի մասին:

ԼԱՅՆ ՀՕՐԻՉՕՆՆԵՑ

Քննելով և գիտելով այն երկուքները, որոնցով հետաքրքրվում է մեր ինտելի-գենտ դասակարգը, մենք նկատում ենք մի տխուր երևոյթ, այդ այն է, որ նա հետաքրքրութեան չափազանց սահմանա-փակ շրջանում է պտտւում և իր զրոյց-ները ու խորհրդածութիւնները կենտրո-նացրել է միայն մի երկու խնդրի վրա: Նա չէ ըմբռնում կեանքը իր ամբողջու-

թեամբ, նա անընդունակ է մտածել կեանքի ընդհանուր վերանորոգութեան մասին, նա չէ կարողանում կշռել և գի-տակցել կեանքի վրա ազդող բոլոր հա-նգամանքները, նա կապ չէ տեսնում մար-դու տնտեսական, գաղափարական և հա-սարակական գործունէութեան մէջ:

Իսկ այդ գիտակցել անհրաժեշտ է: Մինչև մենք չենք ըմբռնի այն բոլոր ազ-դեցութիւնները, որոնք դեր են խաղում իրականութեան մէջ, մենք անկարող կը լինենք ծրագրել և կազմակերպել մեր ա-նկիւրը ապագայի համար և մասնավաճ լինելով մշտական երերումների և առ-տանու մեծի, մենք կը ներկայացնենք մի խղճուկ և անզօր հասարակական գա-նգուած, որ անընդունակ կը լինի որ և է լուրջ կուլտուրական գործ առաջացնել:

Նայեցէ՛ք կուլտուրական ազգերին. որ-քան ճշիւ և բազմադասակ է այն հետա-քրքրութիւնը, որ նրանք ունեն դէպի մարդու մտաւոր, բարոյական և տնտեսա-կան պահանջները: Եւ գրականութիւնը արտացոլում է այդ հետաքրքրութեան բազ-մադասակ արտայայտութիւնները: Մարդ-կային ուղեղը, գիտութիւնը, գեղարուեստը գործում են բազմադասակ անպարէզնե-րում, պատրաստելով հոգ ազգի լայնաբ-ձակ բարգաւաճման համար:

Հայ գրականութեան վրա շատերը մեր հասարակութիւնից դեռ են ցանկանում են նայել իբրև ազգայնական, ցեղագրական գրականութեան վրա և չեն ըմբռնում, որ գրականութիւնը այն ժամանակ է հա-մապատասխան իր կոչման, երբ նա ամ-փոփում է կեանքի երկուքները և հասա-րակական տարրերը՝ իրանց ամբողջու-թեան գիտակցութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՇՈՒՂ ՀԱՄԲՕ
(Համբարձում Աղաթան)

Ալեքսանդրապոլում, նոյեմբերի 8 ին, սբտի պաշտակից մեռել է մեր հռչակաւոր աշուղ Համբոս... Աւելի քան անսպասելի էր այդ մա-հը: Աշուղ Համբո 37 տարեկան մի առողջ, լի-քը տղամարդ էր, ամբողջովին եռանդ ու աշ-խոյժ մի երիտասարդ:

Գոյն տարի է՝ նա աշուղ էր և համբես սկզբից և եթ համբաւաւոր Նրան գիտէին, ճանաչում ու սիրում էին ամբողջ Գովկասում: Եւ նա միանգամայն արժանի էր իր վայելած մեծ համբաւին և սիրոյն: Բնութիւնը զբոյժ

լինելով նրան աչքերից՝ օժտել էր փարթած ընդունակութիւններով: Դեռ ևս պատանի՝ նա գերազանցեց ու «քցեց» իր վարպետ աշուղ-ներին:

Սուր յիշողութիւն, գերազանց ճաշակ—որ անսովոր բան է սովորական աշուղների մէջ,—մի անգամից ըմբռնելու և իւրացնելու ար-տակարգ ընդունակութիւն, շնորհալի և ան-նման աւելադրող (իմպրովիզատոր), մեծ վար-պետ ջութակի, սրտանց ու դուրեկան երգող, սիրահար երաժշտութեան և հոգով արտիստ—ահա աշուղ Համբոս: «Աշուղ»՝ այդ բառի ա-մենակատարեալ մտքով:

Նա նոյնպէս ծնունդ էր առել աշուղների տիպիկան ընավայր Ալեքսանդրապոլից, սա-կայն ոչնչով նման չէր նա սովորական աշուղ-ներին: Համբոս տէնպէրամէնտ ունէր և հոգու մէջ՝ ծանրութեան կենտրոն: Նա «Մշակի» ջերմ երկրպագուներից էր և ամբողջ 17 տա-րի ունկնդրեց նրա քարոզած գաղափարներին ամենամեծ ոգևորութեամբ և հաւատով: Իսկ 15 տարի (մինչև իր մահը) նա անընդհատ բաժանորդ էր և լսում էր Ֆե-րիկի սկզբից մինչև վերջը:

Համբոս մեծ յարգանք ու պատիւ էր վայ-րում իր հայրենի քաղաքին և այդ յարգանքը երբեք չէր թողնացաւ: Նա սիրելի զարդ էր իւրաքանչիւր տան, ուր իր սրտաբուխ երգով և սքանչելի նուագով հոգևորում էր ուրախ-ցողներին: Իսկ հայրենիքից դուրս ունեցած հոգեկան աւելի ու աւելի ծաւալվում էր: Կարս, Ախալցխա, Երևան, Բազու, Բաթում, Բոստով, Եկատերինոգոր և այլ քաղաքներ քաղաքներ նրան հրաւիրում ու խանդավառում պատ-ւում էին:

Ինչպիսի ոգևորութեամբ էր նա երգում նե-րայ Վեհափառ Հայրապետի ս. Օծմանը... Այդ չը պիտի մոռանայ խանդավառ հանդիսին նե-րայ եղող բազմահազար հայ յոյնները:

Գերզեան ճեմարանի քանկահամակին, մասնաժողովի հրաւերով Համբոս գնաց ս. էջ-միածին և յօբելանսին շուք տուողներից ա-ռաջինն հանդիսացաւ:

Գերմանիայում կայանալիք «Հայկական ցու-ցահանդէս» մասնաժողովից էլ Համբոս հրա-ւեր ստացաւ և եթէ ցուցահանդէսը տեղի ու-նենար, վստահութեամբ կարող ենք ասել, որ նա պարզապէս դուրս կը գար և՛ եւրօպայիցե-րի առաջ, Համբոս տաղանդաւոր կերպով նը-ւագում էր մի քանի գործիքների վրա (թառ, ֆլէյտ, փող). իսկ ջութակի նուագումը հաս-ցրել էր տիկնիկական այնպիսի կատարելու-թեան, որ հիացում էր պատճառում երաժշ-տական արուեստի ամենախոստապահանջ վար-պետին ու ճաշակաւորին անգամ: Ասիական եղանակներից դուրս, եւրօպական եղանակ-ներն էլ (մարշեր, վայր, պոպուրի և այլն) Համբոս այնպիսի հարազատութեամբ ու ներ-բութեամբ էր դուրս բերում, որ ունկնդրին մնում էր միայն դարձանալ հայ աշուղի ըն-դունակութեան և տաղանդի վրա: Այդ մա-տում Համբոս իր նմանը չունեցաւ. այդտեղ նա արդէն որբիւր բան էր՝ ոչ աշուղ. այդ բառի—այս զէպրոսի անբովանդակ-մտքով: Մի կա-պէլմիստէրի մօտ Համբոս սովորել էր եւրօ-պական ճայնաղբութիւն և այնքան էր առաջ-գնացել, որ վստահանում էր դաշնամուր լա-րել: Նրա լսողութեան ընդունակութիւնը գե-րազանց էր և հէնց դրանով էլ նա կատարե-լութեան հասաւ ու հաղուարէպ հռչակ վայե-լեց Կովկասում:

Մի տարվայ մէջ Ալեքսանդրապոլը զրկվեց իր երկու սիրելի աշուղներից—Անտօն Անտօ-նեան և Համբո: Աշուղների դասակարգը կա-տարելապէս որոացաւ «խեղօք» Անտօնի և ան-գուղական Համբոյի մահով: Դժոխ է մասնաւոր դերակրի մահը, որովհետեւ ոչ ոք չը պիտի կարողանայ փոխարինել նրան:

Եւ միշտ կսկծանքով պիտի յիշվի վաղաժամ թաւաժած տաղանդաւոր աշուղ Համբոյ ա-նունը. իսկ նրա «Անին», «Ձախոր օրերը», «Ալեղը», «Դաւալը», «Տիկը», «Բճաւ և եղար» և «Հայու սրտեր սուր են զարկեր» եր-

գերի ու եղանակների հոգեպաշտ հնչիւնը կենդանի պիտի մնան իր հայրենակիցների և բնակաւոր ունկնդիրների յիշողութեան մէջ... Գ. Նալբանդեան

Թիֆլիս:

ԾԱԿԱՑԻՑ ԹԻՖԼԻՉ ԲԵՐՎՈՂ ՋՐԱՆՑԻՒ ՄԱՍԻՆ

Լուսաւորված երկիրներում, քիչ թէ շատ մեծ քաղաքներում ազգայնականութեան ներկա-յացուցիչները՝ քաղաքային ինքնավարութիւն-ները, առանձին ուղարկութիւն են դարձնում առողջապահական պայմանների բարելոման վրա: Այսպէս ասած քաղաքային առողջապա-հութեան մէջ, ահագին դեր են խաղում առող-ջարար ջուրը, քաղաքից անմաքրութիւններ արտահանելը և լուսաւորութիւնը: Հէնց այդ է պատճառը, որ զանազան քաղաքներում աշ-խատում են նախ և առաջ ջրանցք ունենալ, կոյուղիների ցանցը անցկացնել և ելեկտրա-կան լուսաւորութիւն մտցնել: Բաղդադում են այն քաղաքները, որոնք ի թիւս այլ բարեբ-նների զուրկ չեն և վերոյիշեալ առողջապահա-կան պայմանները:

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսը այս բոլոր բա-րեքներից ունի, բայց շատ աննշան և անբա-ւարար չափով: Ներկայումս, մասնաւոր ա-մառը, Թիֆլիսում ջրի սով է, կոյուղիները քաղաքի անմաքուր բաժիններում շատ քիչ են տարածված, ելեկտրական լուսաւորութիւնը թէ և շատ է, բայց սարսափելի թանկութեան պատճառով միանգամայն անմատչելի է միջին դասակարգի և, իհարկէ, աղքատ դասակարգի համար: Մի խօսքով Թիֆլիսը կարծես տեխ-նիկայի և գիտութեան խորթ զաւակը լինի: Նրա բնակիչները շատ բան են տեսնում, բայց դրանցից՝ գիտութեան և տեխնիկայի բարեբ-ններից օգտվելու երջանկութիւնը չունեն, շատ բան նրանց համար մատչելի չէ:

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը անթիւ նիստեր է նուիրել ջրանցքի հարցին: Նրանց ջրանցքով աշուղվել է 1885—1887 թ. շինել Աւաղալի ջրանցքը, որը սկզբում բա-ղաբին մասնակարարում էր 400,000 վեդր, իսկ ներկայումս տալիս է 700—800 հազար վեդր ջուր: Սովորաբար գարնանը քաղաք-ցիները խմում էին ամենապղտոր ջուրը, Կու-րի յորդանալու պատճառով, իսկ այս ամառ փորձեցին ջուրը մաքրել, այսպէս ասած պար-զացնել ջուրը: Անցած գարնանը վճեցին կա-տարելագործված քամիչներ շինել, ներկայումս համարեա կիսով չափ պատրաստ են Պէլի սիս-տեմով շինված քամիչները, որոնք գարնանից կըսկսեն գործել, տալով օրական սկզբում 50 հազար, իսկ յետոյ 100 հազար վեդր, այ-սինքն ջրի քանակութիւնը կը հասնի 900 հա-զար վեդրով:

Չը նայելով սր ժամանակաւոր պալլիատիվ շինութիւնները և աշխատանքները արվել են, բայց դրանով բուն, կենսական հարցը չէ վըճո-վում, մի և նայն է ջրի սովը դարձեալ կայ:

Բնականաբար, տարիներ առաջ քաղաքի ա-շուղելը գործիչները սկսեցին որոնել քաղաքի շրջակայքում պարզ, վճիռ աղբիւրներ, որոնց թէ ջրի քանակութիւնը պիտի բուսարար լի-նէր, իսկ ամենապղտորը նրանց որակու-թիւնն էր: 1901 թ. ճարտարապետ Օգեթովը բարձրացրեց Նատախտարի աղբիւրների ջրանցք բերելու հարցը: Սկսեցին մի շարք հե-տադատութիւններ, առանձին մասնագիտա-կան արշաւաններ եղան, ուղարկեցին ջուրը գնահատն մարդկանց վերլուծելու համար, ի թիւս այլոց ուղարկեցին Պետերբուրգ ժողովը-րական առողջութեան պահպանութեան ընկե-րութեանը: Ջուրը վերլուծելուց յետոյ գտան, որ բացի աղբիւրի ջրից նրա մէջ ուրիշ ջրի խառնուրդ կայ, ենթադրեցին, որ նրա հետ խառնվում է և Արագվա գետի ջուրը, որը հո-սում է նրա մօտեքերից:

Դրանից առաջ 1896 թ. յայտնի ինժեներ Լինդելը գալով Թիֆլիս կոյուղիների ծրագրի կազմելու համար, հետաքրքրվեց և ջրանցքի

հարցով: Տեղական մասնագետները ուղեկցութեամբ Լինդլէյը ճանապարհորդեց ղէպի Ծալկայ: Տեսնելով Ծալկայի հարուստ ու բնորոշ աղբիւրները, նրանց ջրի անմահական համը և հակալական քանակութիւնը, Լինդլէյը յայտնեց իր զարմանքը, որ Թիֆլիսցիները մինչև այդ ժամանակ չեն օգտվել այդ երկնային բաւրբեցի, այս անհատուկ աղբիւրներից: Ինժեներ Լինդլէյը եւրօպական չափով էր չափում Թիֆլիսցիներին, կարծում էր, որ մեզանում էլ հարուստները, կապիտալիստները Եւրօպայի փողոտների նման հեռատես են և բնակից չեն վախճնում:

Այնուամենայնիւ այդ տարվանից քաղաքային վարչութիւնը սկսեց լուրջ կերպով հետաքրքրվել այդ հարցով: Ընտրվեց ջրանցքային մասնագիտով տեղացի մասնագետ ձայնաւորներից: Մի քանի նիստեր գումարելուց յետոյ մասնագիտով եկաւ այն եզրակացութեանը, որ տեղական ոյժերը բաւական չեն այդ ծանրակշիւ հարցը լուծելու համար և վճռեցին հրաւիրել արտասահմանից, Միւնխէնից, յայտնի ջրաբան Ի. Լիւու Մեցին, որը բացի ջրանցքի, ջրաբանական գործը բաւ զիտեւալով՝ շատ լաւ ծանօթ է ելեկտրականութեան ամեն կողմերին: Մայիսի սկզբներից յարգելի գերմանացի ինժեները համեստ, հանդարտ, մեղմ լինանքով թեմաք զբաղված էր Ծալկայից բերվող ջրանցքի հարցով և անցնելով դեկտեմբերին, քաղաքային վարչութեան դահլիճում, թարգմանների միջոցով ծանօթացրեց իր կազմած ծրագրի հետ, որ նա անուանել էր «Ծալկայի ջրերի Թիֆլիսում շահագործելու նախագաղափարային ծրագիրը»:

Ի նկատի ունենալով առաջարկած ծրագրի լրջութիւնը և նրա հակալական նշանակութիւնը թէ Թիֆլիսի և թէ նրա շրջակայքի համար, քաղաքային պաշտօնակատարը, բացի ձայնաւորներից և քաղաքային տեխնիկներից հրաւիրել էր, տեղական երկաթուղային վարչութեան, գիւղատնտեսական ընկերութեան, ջրային (ջրաբանական) վարչութեան ներկայացուցիչներին, տեղական բանկերի տնտեսներին, բժիշկներին, ինժեներներին, նահանգական վարչութեան շինարարական բաժնի ճարտարապետներին, մի խօսքով այն բոլոր անձանց, որոնց ներկայութիւնը անհրաժեշտ էր:

Աչքի առաջ ունենալով Մեցի ծրագրի հասարակական նշանակութիւնը ոչ միայն Թիֆլիսի ու հովիտի, այլ և ամբողջ աշխարհի, որովհետև նա հանդիսանում է որպէս մի ջրաբան, որի ջրի շահագործութիւնը բազմակողմանի և շատ ուսանելի առնասարակ ջրաբանական տեսակէտից: Յաջորդ յօդուածում կաշխատեմ մի ամփոփ և հանրամատչելի հասկացողութիւն տալ Մեցի կազմած ջրանցքի ծրագրի մասին:

3. Չախմախագեանց

ԳԵՐԱՍՏԱՆՈՒՆԻ 2. ՏԵՐԵԱՆ-ՂՈՐԱՆԵԱՆ

(Նամակ Մօսկվայից)

Ռուսաց օպերային անուանի հայ դերասանուհի տ. Հեղինէ Յով. Տերեան-Ղորանեանը իր 20-ամեայ յօրելեանի առիթով տալիս է իր վերջին ներկայացումը Սօլօգիւնիովի թատրոնում դեկտեմբերի 9-ին: Ներկայացումը կը լինի խոսն և բաղկացած «Տրապիտոս» և «Գարմին» օպերաների զանազան ակտերից ե դա մի և նոյն ժամանակ համարվելու է նրա 20-ամեայ յօրելեանը, որով յարգելի տիկինը ընդմիջում թողնելով բեմը, նուրբ վրէպ է երգեցողութեան դասատուութեան:

Օգտվելով առիթից աւելորդ չենք համարում տալ այստեղ տիկնոջ մասին մի քանի կեսագրական տեղեկութիւններ, ծանրանալով յատկապէս նրա բեմական գործունէութեան վրա: Ինչպէս յայտնի է, տ. Հեղինէ Տերեան-Ղորանեանը հայ ընտանիքի զաւակ է, ծնվել է Թիֆլիսում, ու անցուցել է իր մանկութիւնը, յաճախելով գիմնալիսիոն և պարապելով նոյնպէս երաժշտութեամբ (բաշնամուր և ջութակ):

Տանկվեց տարեկան հասակում մատղաշ օրիորդը սկսում է արդէն ձանձրանալ հայ ընտանիքի նեղ և անձուկ շրջանում: Կաւսասպէս նրան անտանկելի է նաև նահանգական զաւաքի մթնոլորտը: շատ շուտ է հանդէս գալիս նրա վառ բնաւորութեան գեղումը և նա ճանապարհ է ընկնում դէպ Պարսից, ուր երաժշտութեան դասեր է ստնում տիկին Վիրաբոյի մօտ: Դժուար չէ երևակայել, կարողում ենք մի հանդիսում (Русский Театр. Къ портрете артистки рус. оперы Е. І. Тарьянъ-Коргановай), թէ Ինչ ազդեցութիւն պիտի ունենար մատղաշ օրիորդի վրա այս շրջանը,

ուստի ոգևորութիւն էր քաղում մեր երեկելի հեղինակը, Ի. Ս. Տուրգենեւը, շրջան, որ արթնացնում էր հանձարները իր երկունքում, ձգտումները դէպի գեղարուեստը և օրիորդ Հեղինէն սկսում է երգեցողութեան դասեր առնել տ. Մառիեղի մօտ, որ այն ժամանակները երգեցողութեան երեկելի դասատուի հըռչակն էր վայելում: Դերասանուհու հիւանդի, կորովի, խանդաղատ ձայնը (կօրսատուրն, սօպրանո) հմուտ և փորձառու դասատուի դեկավարութեամբ հասնում է ցանկալի դրութեան և մի քանի տարուց յետոյ Տերեան-Ղորանեանը Ռուսաստանում արդէն բեմ է դուրս գալիս և առաջին դափնիքն է ստանում: 1882 թ. Մառիեղի մօտ աւարտելուց յետոյ, նա, անմիջապէս, դուրս գալիս Վարշովա, չորս տարվայ պայմանաթուղթ պիտի ստորագրէր Բրիտանիկ թագաւորական թատրոնի վարչութեան հետ: Բայց վրա հասած պահը պ. Տերեանի հետ (որտեղից ծագում է դերասանուհու կըրկին ազգանունը—Տերեան-Ղորանեան) առ ժամանակ խոչնդոտն եղաւ նրա բեմական գործունէութեան: Մակայն բուռն ձգտումն դէպի բեմը, հարկադրեց նրա առաջին անգամ երգել մայրենի Թիֆլից քաղաքում պ. Բ. Ս. Փիթոյեանցի մասնաւոր թատրոնում: Իսկ պաշտօնապէս նա բեմ դուրս եկաւ ապրիլի 19-ին 1884 թ. կայսերական թատրոնում «Севильский Цырульник» օպերում Ռօզինի դերում և ուշադրութեան արժանի այն է, որ առաջին ծաղկեայ փուլը ստացաւ Տամբրիկից:

Կարճ ժամանակից յետոյ եռանդոտ, հանձարեղ դերասանուհին թողնում է հիւսիսը և հեռանում է այնտեղ շուր ծովը և երկիւրը կապուտակ է—Իտալիա, երգում է առաջնակարգ թատրոններում ընկերակցութեամբ Մաճինի, Մարկոնիի և ամենայն ուրեք ահագին հոչակ է վայելում, փայլեցնելով հայկական հանձարը: Ապա կրկին վերադառնում է Ռուսաստան և հանդէս է գալիս Պետերբուրգ «Искатели жемчуга» օպերայում և անդուգական երգչուհու համբաւ է ստանում:

Այս միջոցին դերասանուհին փոխելով իր ամպլուան՝ անցաւ դէպի դրամատիկական սօպրանո և նրա հանձարի ոյժը, բնական ձիրքը և անխոշ ջանասիրութիւնը հրաշքներ գործեցին և յաւերժացրին նրա անունը թատրոնական աշխարհում թէ Իտալիայում, թէ Գերմանիայում և թէ Ռուսաստանում: Ով ուշադրութեամբ հետեւել է թատրոնական բրոնխիօնին, նա, անշուշտ, նկատած կը լինի, թէ Տերեան-Ղորանեանին են վերագրում անշնչելի տիպարների ստեղծելը, որպիսին են Այդա, Կարմէն, Իւլիֆ (Յուլիֆ), Վիլհելմ—Տրապիտոսայում, Վալենտինա—Հուդե-նեաներում, Լիզա-Պիլովայա դամա օպերաներում:

Վերջին տարիներս շնորհալի դերասանուհին բնակութիւն հաստատելով Ռուսաստանում, երգում էր Ս.-Պետերբուրգում, Մօսկվայ, Կիւիվ, Օդեսայա, Սարգիով քաղաքներում, միշտ զմայլեցնելով իր ունկնդիրներին: Մեզ վիճակվեցաւ լսել նրա էքստրաֆուր, Ակվարիումում, Սօլօգիւնիովի թատրոնում, ուր ի միջի այլոց մասնակցում էր նաև պ. Ա. Կաստանեանցը: Դերասանուհին մեզ միշտ պատճառում էր բարձր էսթետիկական վայելչութիւն:

Մ. Շուրեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Դեկտեմբերի 3-ին

Կարգալով «Մշակ»-ի ներկայ թիւ 259 համարը «Ղուբայից» Արիստակէս արք-եպիսկոպոս Սեդրակեանցի առաջարկի մասին—ամուսնացող երիտասարդներին բժշկական վկայական ունենալու համար, չենք կարող անտարբեր լինել և մասների արանքով նայել այն կարեւոր խնդրին, որ սրբազան հայրը զրեց սեղանի վրա: Մենք շատ ուրախ ենք, որ այդ հարցը զրել է մեր հոգևորականներից ամենասիրելի և ամենանորոն եպիսկոպոսը և անց է կացրել այդ հարցը բարձր աստիճանում—Միսոպի: Մենք մեր կողմից միայն այսբանը կասենք. որովհետև ս. Միսոպի այդ օգտաւէտ օրէնքը միայն հասարակութեան մի մասը—լրագիր կարդացողը կիմանայ, զրա համար մենք մեր կողմից կառաւարկէինք ս. Միսոպին հետեւալը: ա) որ այդ հրամանը կարգապէս անխափ ընդունելու ենք և բ) ս. Միսոպը կազմել տար մի փոքրիկ բրօշուր այդ առթով և էլ միաձնի տպարանում տպել տալով, ձրի տարածել ժողովրդի բոլոր խաւերի մէջ ի գիտութիւն բոլորի:

Գ. Աղազադեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, դեկտեմբերի 10-ին, ժամը 3-ին, կէսօրից յետոյ Կովկասի Կառավարչապետի պաշտօնակատար գեներալ Մալմա այցելութիւն տուեց ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, որ երկու օրից ի վեր փոքր ինչ տկար էր: Այցելութիւնը տևեց 20 րոպէ:

Վեհափառի ճանապարհորդութեան մասին մեզ գրում են Շուրաբերդի հետեւալը՝ «Ինչ սեպտեմբերի սկզբներին մեր հասարակութիւնը սպասում էր վեհափառ Կաթողիկոսին տեսնելու մեր գիւղում, բայց երբ լսեցին վեհի այլ ևս չը գալու լուրը, բոլորն էլ սկսեցին տրտնալ, որ 4000 ից աւելի հայ ընակիչ ունեցող մի մեծ աւան չի արժանանում վեհի ուշադրութեան: Երէկ յանկարծ մեզ մօտ հիւր գալով Թիֆլիսի առաջնորդ եպիսկոպոս Սաթրեանը, բոլորին անսպասելի կերպով ուրախացրեց, որ Վեհափառ Հայրապետը իր խոստումը կատարելով, վաղը կը լինի Շուրաբերդ: Վեհի գալիստեան լուրը խոյն տարածվեց գիւղում ու շատ կարճ միջոցում շինական կառավարութեան տան առաջ ահագին ամբոխը, տանուէր Մէհրաբեանի ներկայութեամբ, վեհի էր բանվել թէ ինչպիսի կայութեամբ, վեհի էր բանվել թէ ինչպիսի երկար վիճելուց յետոյ հետեւալ խելացի վեհի էր կայացաւ. ընտրել հինգ ամբողջութեան կարգադրիչ մասնագիտով, որին թոյլ տալ ծախսելու մինչև 600 րուբլի, այն պայմանով, որ այդ դուրսից գնվի տասը հատ եւրօպական ամենալաւ գութաններ, որոնց վրա ամբարցնել պիտի տեսակներ հետեւեալ մակագրութեամբ՝ «Հայոց Հայրիկեց իւր սիրեցեալ երկրագործին 1904 թ. դեկտեմբերի 7-ին», ու այդ գութանները վիճակ գցել գիւղի ամենաշքատ և աշխատանքի մէջ ու նուրբը նըրանց: Այս համակերի վեհից կայանալուց յետոյ, տանուէր Մէհրաբեանը միւս առաւօտ 120 ձիաւորով գնաց դիւանորելու Վեհին, իսկ ժողովուրդը և հոգևորականութիւնը արհեստաւորների զօրանքներով, աշակերտների ու աշակերտուհիների հետ հանդիպեց գիւղի ծայրին ու կեցցէներով ուղեկցեց Վեհին մինչև յաւաքարած բնակարանը, որ պատրաստած էր շատ շքեղ կերպով: Ժողովուրդը ամբողջ գիշերը չէր հեռանում փողոցից, իսկ պատահելով որ Վեհը ժողովուրդի ուղեկցութեամբ, գընալով ս. Մեսրոպ եկեղեցին, օրնեց ժողովուրդը և հոգեհանգիստ կատարելով Ռոմանոս Նաղիբեանի գերեզմանի վրա՝ մեկնեց կայարան:

Թիֆլիսի քաղաքային պ. Գրիստափոր Վերմիշեանը անցնալ օրը ներկայացաւ Կովկասի Կառավարչապետի օգնական գեներալ Լէյտէնանտ Ե. Գ. Մալմային:

Ամսի 9-ին կայացաւ Թիֆլիսի քաղաքային շինութեան միջ քաղաքային վարչութեան և քաղաքի շուր մատակարարող յանձնաժողովի միացեալ նիստը, որի ժամանակ լսվեց ինժեներ Մեցի գեկուցումը Նառախտարի կոչված տեղի ջրի աղբիւրների մասին: Զեկուցումից երևաց, որ վերոյիշեալ աղբիւրները իրանց ջրերի մի մասը ստանում են Արագած գետից, որը գտնվում է 3 վերստ հեռավորութեան վրա Նառախտարից. աղբիւրների ջրերի տարածութիւնն է 70, իսկ Արագածին 30: Ուսումնասիրութիւնը կատարված է թիթի կերպով և ասելով, կը պահանջվի 6—7 հազար: Թէ Ինչքան ծախք կը պահանջվի այդ աղբիւրներից ջուր բերելը մինչև քաղաք, զրա մասին Մեցը դրական ոչինչ չը կարողացաւ ասել: Համեմատելով Մալկայի աղբիւրների ջրերի հետ գտնում են, որ Մալկայի ջուրը բոլորից բարձր է կանգնած: Այնուհետև նիստը շարունակվեց առանց Մեցի, ժողովականներից ոմանք կողմնակից էին Մալկայից ջուր բերելուն, ոմանք էլ Նառախտարից և ոմանք էլ Աւառեան ջրանցքի ընդարձակելուն: Ի վերջի ժողովը ընտրեց մի մասնագիտով, որին յանձնարարվեց զբաղվել միմիայն Մալկայից ջուր բերելու հարցով և իր եզրակացութիւնը մօտ ժամանակներում ներկայացնել քաղաքի ջուր մատակարարող յանձնաժողովին, քաղաքային խորհրդին ներկայացնելու համար:

Ներքին գործերի մինիստրը միջնորդութիւն է յարուցանում, որ վերաբնութեան ենթարկ-

վի հրէաների մշտական բնակավայրերին վերաբերող օրէնսդրութիւնը:

Այսօր, դեկտեմբերի 11-ին, երեկոյան ժամը 7 1/2-ին Թիֆլիսի հասարակական գրադարանի շէնքում Մօսկվայի Հնագիտական Կայսերական ընկերութեան Թիֆլիսի ճեղքը նիստ է ունենալու, որի մէջ պ. Դերժաւինը կարդալու է իր մի գեկուցումը «աղիկ փախցնելու» մասին:

Ներկայ տարվայ օգոստոսի Ամենաողորմած մանիֆեստով շատերն իրաւունք ստացան Արխանգելսկի նահանգից վերադառնալ իրանց բնակավայրերը և վերադարձին օգտվել երկաթուղիների վրա արտօնաւ տոմսակներով: Այդ արտօնութիւնը վերջանալու էր դեկտեմբերի 1-ին, բայց այժմ հրաժարված է նորից շարունակել մինչև 1905 թիւ մարտի 1-ը:

«Ք. Բ.»-ում կարդում ենք. «Այսօր, դեկտեմբերի 5-ին, կայանալու է հայկական սովորական երեկոյթը խիստ համակերի բարեգործական նպատակով: Եւ նպատակը, և երեկոյթի հետաքրքիր ծրագիրը, և նրա ինքնօրինակ արեւելեան բնաւորութիւնը, որ ազնուականների ժողովարանի դահլիճներին տալիս է արդուգործ, անկասկած կը դրաւն մեծ հասարակութիւն և կօգնեն, որ երեկոյթն անցկենայ այնպիսի կենդանութեամբ, ինչպէս անց են կացել միւսները: Երեկոյթը սարքում է արտիստ Ս. Գ. Վլասովը. մասնակցում են—տ. Բայկինա, Բոստովցիւ, Տերեան-Ղորանեան, Յվետովա և պ. պ. Գրիգորիով, Եւսթով, Մակաւով, Ս. Կար-Բօստանկի և Յիգօով: Բացի դրանից՝ կը լինեն ազգային նուագաժութիւն և ազգային պարեր:

Յիշեցնում ենք հասարակութեան, որ այսօր, երեկոյան ժամը 8 1/2-ին Արտիստական ընկերութեան վերին դահլիճում գովաւոր Արխանգելսկի համար բոյսերի և կենդանիների աշխարհում: Դասախօսութեան ծրագիրը հետեւեալն է: Մասն I.—Ինչ է կենքը, Նիւթը և ոյժը. ամենապարզ կենդանի էակը, կենքի տարրերը. արտաքին աշխարհի և նրա ներքինութեանը. Մակրոօզմ և միկրոօզմ. գոյութեան կուրի եղանակները և միջոցները. կարելի է խստիւ սահմանագծել բուսական և կենդանական աշխարհը. բոյսերի կենքը և նրանց յարմարվելը—շարժումներ, պտղաւորութիւն, միատեղ կենք, պտղաւորութիւն (պարսիկալի), անունը միջատներով: Մասն II.—Միկրօօզմանիքներ, որդերի և միջատների պիլիթիական ու դիտակցական կենքը. նրանց անհատական և հասարակական կենքը (ժողով, ընտանիք, փեթակ, մրջնակ), աշխատութեան բաժանման սկզբունքը. թռչունների և բարձր կենդանիների հանրակացութեան ձևերը. կուրը կենքի համար և յարմարումն նրանց մէջ. միմետիզմ. առողջ, յոգնած և հիւանդ մարդը. մարդկային գործարանաւորութեան ինքնապաշտպանութիւնը. երկու տեսակ պահեստի ոյժեր. ժառանգութեան, դաստիարակութեան և կենքի կացութեան նշանակութիւնը. Զեխօվի մտայն մարդիկը. կուրը կենքի համար և ձգտումն դէպի իդէալը. եզրակացութիւն:

Պետերբուրգի Ազատ-Տնտեսական ընկերութեան համար մշակված է նոր կանոնադրութիւն, որ և յանձնված է երկրագործութեան մինիստրութեան քննութեանը. «Ք. Բ.»-ին հաղորդում են Պետերբուրգից: որ մօտ օրըս այդ կանոնադրութիւնը կառավարվի մի նիստերի կօմիտէին՝ հաստատելու:

Նոյեմբեր ամսում վախճանված մանկավարժ Բուսակովը դրական ֆօնդին կտակել է 34,000 րուբլի: Դրանից 24,000-ը զանազան դպրոցներում չքաւոր սաներին թոշակ տալու նպատակով (արտասահմանում սովորողներին էլ կարելի է թոշակ տալ), իսկ 10,000 րուբլին ընդհանրական ֆօնդի կարելի է համար: Կտակագատար նշանակված է Ս. Ա. Վեհեբովը:

1904 թիւ սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը արդարադատութեան մինիստրի ամենահաւատակ գեկուցումների հիման վրա՝ պետական կամ քաղաքական յանցանքների համար պատժի ենթարկված անձերից 197 հոգի ազատված են իրանց պատիժներից, իսկ 13 հոգու էլ պատիժները թեթեւացված են: (ՇՈՒ. Ա.)

Դեկտեմբերի 3-ին Պետերբուրգի դուստրի- նիստերից ձայնավորները կեսից շատը հեռա- ցաւ, որովհետեւ նախագահը մերժեց հերթա- կան հարց դարձնել այն յայտարարութիւննե- րը, որ ընդունել էր դուստրիստները 1-ին կայացած իր դռնփակ նիստում (P. B.)

Սերսոնից հետագրում են «Слово» լրագրի- ՚ն հետագրական գեղատաղի հերթական ժողովը որոշեց ժողովրդական կրթութեան գործը խե- լացի կերպով վերակազմել: Շտուներստների երեխաներին քիչ թուով աշակերտ ընդունելու հարցի մասին որոշվեց ընդունել, որ սահմա- նափակով միջոցները պէտք է համարել ան- նպատակալարմար և կրթական լայն գործի ոգուն հակառակ: Ժողովրդական լուսաւորու- թեան միջնորդութեանը խնդիր է ներկայաց- ված ոչնչացնելու շտուներստների համար սահ- մանափակող միջոցները, իսկ եթէ այդ խնդ- րը մերժվի, որոշված է բոլոր տալ կառա- վարիչ Սենատին:

Մայրաքաղաքի լրագրիների աւելում, հետե- լեալ տարին Պետերբուրգում հրատարակելու է կին-բժիշկների ընդհանուր ժողով: Այդ ժողո- վի ընտրութեան ամենակարեւոր հարցերից մէկն է խնդիր ներկայացնել, որ կանանց թղթա- տրվել վարել պրոֆեսորական պաշտոն՝ այլ էլ ոչ միայն կանանց բժշկական ինստիտուտնե- րում, այլ և բոլոր համալսարանների բժշկա- մասերում: Նոյնպէս և ընտրութեան առարկայ է լինելու կանանց աւելի դիրքութեամբ հիւան- դանոցներում պրակտիկայի թողնելու հարցը:

Վարչապալայի համալսարանի իրաւաբան ու- սանդոնների մի խումբ ձեռնարկել էր ստատիս- տիկական հետազոտութիւններ անել քաղաքի բոլոր ուսանողների կենցաղի վերաբերու- թեան: Երեւոյն է, որ ուսանողների մի խո- շոր մասը զրկված է ամենամանրագէտ իրե- րից, կարասիներ չունենալով, շատերն ստիպ- ված են քնել յատակի վրա, նստել սնտուկնե- րի, գրել լուսամուտի գոգի վրա: Ուսում- նասիրված ուսանողների կէս մասը պատու- պարիով է մուտք կամ կիսամուտք սենեակ- ներում:

Գոմեյում ընկնում է ուսու ամբիւր կողմից հրէաների վրա արած յարձակման, թալանի և կոտորածի ու բռնաբարութիւնների գործը: Վկաների թիւը հասնում է 1000 ի: Մամուլը ունի իր բազմաթիւ ներկայացուցիչները, ո- րոնք օր օրի վրա հաշիւ են տալիս հասարա- կութեանը: Վերջերս Ռուսական Հեռագրական գործակալութիւնը՝ ուղարկել էր Գոմեյից մի հեռագիր, որ մամուլի հրէա ներկայացուցիչ- ներն աղաւաղում են փաստերը, ծանուցում վը- կաների ցուցումները և այլն: Այժմ այդ հրէա թղթակիցները, թուով 6 հոգի, գտնուում են ներկայացրել Գործակալութեան դէմ և նրան մեղադրում են զրպարտութեան մէջ: Իսկ քրիստոնեայ թղթակիցները հետադրում են «P. B.»-ին, որ ըրանք հաստատում են իրանց հրէա պաշտօնակիցների ուղղամտութիւնը, ան- կեղծութիւնը և ճշմարտութիւնը Գոմեյի հակա- յական դատի խնդրում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՒՐԶԸ

Տեղեկութիւններ Պորտ-Արտուրի մասին: Զի- ֆուից հեռագրում են «Daily Teleg.» լրագրին: «Պորտ-Արտուրից առաջատանաւում եկած ուսանողները ասում են, որ Պորտ-Արտուրում կա- տաղի կուլ է մղվում, բայց ուսանողները դեռ չարունակում են պահել իրանց ձեռքում գլխա- տը պաշտպանողական գծերը: Եւ պաշտպանները ստիպված էին նահանջել իրաւամտներից ամ- րոցների ներքեւում: Զօրքերը սաստիկ նեղ- վում են ցրտերից: Ռուս նաւատարները հա- տապաշտում են, որ ոչ «Մեկամտաօլը», ոչ «Օտաւաթիւն» ոչ մի վնաս չեն ստացել և պա- հակազօրքի ուղին հիւանալի է: Սահմանները դեռ բաց են: Հաւատացնում են, որ պահա- կապօրքը պարունակում է դեռ 20,000 մարդ: Վերջին կռիւներում քիչ թաղամասներ կային, բայց շատ վիրաւորներ: Եւ պաշտպանները այլ և չարձակումն չեն գործում մեծ խիտ սիւնե- րով 10—20 հազար մարդանի, այլ աշխա- տում են այժմ վերցնել պաշտպանողական շի- նութիւնները ամեն միւր առանձին: Այդ նպա- տակով ուղարկվում են միաժամանակ յար- ձակումների համար փոքր զօրախմբեր, ամեն միւր 1000 հոգուց բաղկացած: Հաւատացնում

են, որ վերջին 2 շաբաթվա ընթացքում եւ- պօնացիները կորցրել են 40,000 մարդ: Երե- օրեայ կուլը 203 պատանոց բլրի վրա չա- փազանց խիտ էր: Այժմ այդ բլրերը, այս- պէս ասած, չէզոք երկիր է հանդիսանում: Եւ պօնացիները գտնվում են մօտերը, բայց չեն կարողանում նրա վրա թնդանթներ դնել: Այդպէս էր դրութիւնը դեկտեմբերի 2-ին, ե- րկույն: Եւ պօնացիները դիմելները դեռ մնում են չը հաւաքված ամբողջների առաջ: Եւ պօնացիները ձգում են իրաւամտներից բաւկներ, ի գաղափար փոշիով: Ասում են, որ «Բօգատիրը» վերջացրել է իր կարկատումն Վլադիվոստոկում և որ ուրիշ նաւերը նոյն- պէս ռազմականապէս պատրաստ են: Ստեռն- լը դարձեալ վիրաւորվեց հրացանային գնդա- կով, ոչ այդ վէրքը, ոչ մի ուրիշ վէրք, որ ստացել է զինիւն և որ արդէն լաւացել է, ծանր չեն: Մի շոգեհաւ, որին աշողվեց մտնել Պորտ-Արտուր, սարաւ 1000 տոննա արկեր: (P. A.)

—Տօկիօց հաղորդում են «Lokal Anzeiger» լրագրին, որ Պորտ-Արտուրում ոչնչացած նա- լերի արժէքը հաշվում են 170 միլիոն ռուբլի: Պորտ-Արտուր հասել են անկասկած նոր ա- ջակից զօրքեր ոչ պակաս քան մի դիվիզիա: (HOB.)

Եւրոպ. բախակաւ հաղագրան: «Echo de Paris» լրագրի Պետերբուրգի թղթակիցը ա- սում է, թէ բալտիկական երրորդ էսկադրան կուղարկվի Հեռաւոր Արեւելք աղբիւր սկզբին: Այդ ուղարկումը չէ պաշտօնական աղբիւր- ներից: (HOB.)

Բախակաւ հաղագրայի ուղիւ: «N. F. Presse» թերթի պատերազմական ընթացաւոր գրում է. «Անցաւ 50 օր այն ժամանակից, երբ պա- թից Հուլի միջնադէպը, իսկ բալտիկական նա- լատուրը դեռ չէ հասել Հնդկական ովկիանո- սին: Եթէ իբրեւ չափ ընդունել այն արագու- թիւնը, որով էսկադրան ընթանում էր մինչև այժմ, ուրիշն նա կարող է հապտադ հասնել միայն յունվարի սկիզբը (ն. տ.): Այն փա- տը, որ էսկադրան դեռ չէ հասել Կապուտա- ցոյց է ասելով, թէ նա ի նկատի ունի Պորտ- Արտուրի անվան հաւանականութիւնը և ու- րիշն լուրջ դիտարկութիւն չունի գնալ Պորտ-Արտուրի շրջը: Եւ թաղանթը—ասում է լրագիրը,—որ առաջին ընդհանուր թշնամու- հետ տեղի կունենայ Զօրի արքեպիսկոպոսի բաղձութիւնը ներդնողներից մէկուն: Եթէ ներթա- րեքը, որ բալտիկական էսկադրան կը հասնի Կապուտա գեղեկութեան վերջին, ուրիշն նա կարող է հասնել Զօրի արքեպիսկոպոս միայն 90 օրից կամ 3 ամիսից յետոյ, ուրիշն ընդ- հանուրն հնարաւոր է միայն ապրիլին: Բոլոր նոր նկատումները հասցնում են Վիէնայի լրագրին այն համոզման, թէ բալտիկական էս- կադրան գնում է ոչ թէ Պորտ-Արտուր, այլ Վլադիվոստոկ: Ծանապարհին—ասում է լրա- գիրը, նա անխուսափելի կերպով կը հանդի- պէ հապտոնական էսկադրային հետ, բայց կա- շողվի նրան խոյս տալ կամ ընդունել կուլ: Եւ ամենայն դէպս պէտք է հանգստութիւն այդ- քան երկար ճանապարհից յետոյ, իսկ այդ հանգստութիւնը կարող է նա գտնել միայն Վլադիվոստոկում: Այդ պատճառով նա պէտք չունի շտապել, որովհետեւ դեռ 31/3 ամիս կայ մինչև Վլադիվոստոկ ստուգանքներից ազատվել: (B. BEd.)

Եւ պօնացի սենսակաւ դուրիւնը: «Daily Mail» լրագրի թղթակիցը նկարագրում է հե- տեւեալ կերպով. «Պատերազմը նստում է Եւ- պօնային մէկ միլիոն և մի քառորդ շաբա- թական: Եւ պօնացի շատ աննշան պետական պարտք ունի, և պետական գանձարանի կար- գաւորները աչքի են ընկնում իրանց հա- գուսգիւտ շիտակութեամբ: Բայց երկրի հարըս- տութիւնը համեմատաբար չնչին է շնորհիւ ազգաբնակչութեան պահանջների ստոր մակե- րնոյթի: Բանւոր դասակարգերը մեծ յարմա- րութեամբ ապրում են ամսական մի քանի ռուբլով: Դատարանների ռոճիկը 400 ռուբլուց չէ անցնում տարեկան, և բարձր դիրքի շատ պաշտօնականներ այնքան են ստանում, որ նա- լանց ռոճիկից ծիծաղելով կը հրաժարվէր Նի- լօրի իւրաքանչիւր ղեկավարի: Այդ բոլորը, ի հարկէ, շատ լաւ է: Կենսի պարզ եղանա- կը դատարարական է զօրեղ բնաւորութիւն- ներ և ուժեղ ցեղ:

Բայց իբրեւ պաղպիսի դրութիւնը հակա- ռակ կողմն ևս ունի: Երբ պատերազմը սկսվեց, ամեն կողմից լսվեցին անտեսութիւն անելու կոչեր: Եւ այդ կոչը արձագանք գտաւ ամբողջ երկրի մէջ: Ոչ միայն հասակաւորները կրճա- տեցին իրանց ծախսերը, այլ մինչև անգամ մանուկները դարձանքրում զրկում են իրանց նախաճաշից և սոված են մնում մի քանի

գրօշներ տնտեսիւն և պատերազմի համար ուղարկելու նպատակով: Եւ պօնացի առա- կաների և մինչև անգամ հաւաքակ յարմարու- թեան առևտուրը կանգ է առել: Բայց գործու- նէութեան աղաղիսի եղանակը այն հետեւանքն ունի, որ ամեն տեսակի հաղաբաւոր բանւոր- ներ ամբողջ երկրում առանց գործի են նստած և աղքատացած են: Առևտրական ֆիրմաներում պաշտօն ունեցող կէս միլիոնից աւելի անձինք առանց աշխատանքի են մնացել: Իւրաքանչիւր տարի մօտ 30,000 ձկնորսներ գնում էին ձուկ որսալու դէպի Կորէյական ափերը: Այժմ նրանք պարապ նստած են ափի վրա: Կառավարու- թիւնը ևս տնտեսութիւն է անուամ: Նա միջոց- ներ չը խնայեց դէպքի և ռազմամիջոցների վրա, որոնք բոլորն էլ լաւ յատկութեան են: Մնացած բոլոր բաների վրա խնայողութիւն են անում մինչև վերջին աստիճանը: Եւ պօ- նային բաղդից բերքը այս տարի գերազանց էր: Կառավարութիւնն էլ իր կողմից անում է բոլորը, ինչ կարող է ազգաբնակչութեան ուղին խրախուսելու համար: Պատուէրների նը- շանաւոր մասը զօրքի համար կատարվում է երկրի ներսում, որ ապրուստի հարաւո- րութիւն է տալիս որբացած ընտանիքներին: Արտասահմանում փոխառած փողերի մի մասը աղաղիսով մնում է երկրի ներսում և մեղմաց- նում է պատերազմի թշուառութիւնը: Ազգա- բնակչութիւնը իր հերթին տալիս է իր բոլոր խնայողութիւնները և թանգազին իրերը գրաւ կտրելու համար: Այդ պատճառով կարտու- թիւնը Եւ պօնային դեռ ևս սուր ձեռք չէ ընդունել, և Եւ պօնացիները դեռ ևս կարող է եր- կար դիմանալ: Եւ պօնացիները պատրաստ են ծախել իրանց երկաթուղիները և պետական կալուածները, միայն թէ չը տանուլ տան պա- պատերազմը փողի համար: (HOB. Время.)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Standard» և «Daily Telegraph» լրագրի- ները համակրութեամբ ընդգծում են, որ Մի- ջին-ասիական ընկերութեան մէջ կարգացած ճառում լոյր Գոյալդսէյ այն կարծիքը յայտ- նեց, թէ Անգլիան պէտք է մասնակցէ Բաղ- դադի երկաթուղու կառուցման մէջ: Մերվէստ- Իրփէյ մեծ սխալ անուանեց այն բանը, որ Անգլիան չէ ուղղում մասնակցել այդ ձեռնար- կութեան մէջ և յայտնեց, որ ներկայ հանգա- մանքներում առանձին զինվորներ կարելի էր ձեռք բերել յօգուտ Անգլիայի: Ուրիշ աղբիւր- ներից ստացված տեղեկութիւնները համոզում են, որ Գործարարական աշխատում է բարեկա- մալ Անգլիային հետ, որովհետեւ հարաւորու- թիւն չունի իր սեփական միջոցներով շարու- նակելու երկաթուղու կառուցումը: Անգլիա- ցիները իրանց կողմից պատրաստ են փող տալ, եթէ նրանց կը թոյլ տան երկաթուղու մի մասը կառուցանել Պարսից ծոցից Բաղդա- Դէյ մինչև Միջնադէպը վրայով: Սակայն այդ շրջանները գերմանացի բանակաւորներ են իրանց ձեռքում պահել ցորենի մշակութեան և նաւթի արդիւնաբերութեան համար:

—Պարիզի «Temps» լրագրին Կ. Գոյալից հա- ղորում են, որ թիւրքաց կառավարութիւնը վճռել է բալտից յետոյ աւելի եռանդով ըզ- բաղվել Մակեդոնայի իրադարձւան գործով: Բ. Դուռը կամենում է օգուտ քաղել յոյների և բուլգարների պատերազմական նաւեր, և էկ- զարդուութեանն միջև շարունակվող կռիւց վերջնականապէս իր հաշիւները վերջացնելու համար ապստամբների հետ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ԴՈՒՍՏԱՑ ԳՈՐԾԱԳԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

8 դեկտեմբերի

ՀԱՄԳԻ, 9 դեկտեմբերի (Հաւաս): Պետու- թիւնների ներկայացուցիչները ստորագրեցին այսօր պատերազմի ժամանակ լողացող հի- ւանդանոցների դրութեան վերաբերեալ համա- ձայնութիւնը:

ՏՕԿԻՐ, 9 դեկտեմբերի: (Բէյտէր): Եւ պօ- նացիները գրաւեցին նշանաւոր դիրքեր Ա- դանու ծովախորշի մօտ:

ՄԻՆԳԱՊՈՒՐ, 9 դեկտեմբերի: (Բէյտէր): «Լիւրդի» հաղորդագրութեան համաձայն, եւ- պօնական երկու պատերազմական նաւեր, ըստ երեւոյթի կը յայտնեն, երթեկում են ծովում ի տես Միւնգապուրի:

ՄՈՒԿԻՆԻՆ, 8 դեկտեմբերի: (Սեփ. թղթ.): Այստեղ յամաւ լուր է պտուտ, որ այստեղի միջնա-ցիւնը նամակ ստացաւ Եւ պօնական զինաւոր հրամանատարից, որը հրաւիրում է նրան գուրս գալ Մուկիւնից և գուրս բերել որբան կարելի է շատ ազգաբնակչութիւն՝ աչ- քի առաջ ունենալով ապագայ դէպքերը: Հա- ղորում են, որ միջնա-ցիւնը առանց որ և է ուղարկութեան թողեց այդ հրաւերը:

ՄՈՒԿԻՆԻՆ, 9 դեկտեմբերի: (Սեփ. թղթ.):

Եւ պօնացիները, բարակ գիծ կազմելով, սաստ- կապէս շարունակում են իրաւամտներ շինել: Համարձակ կառուարները ներս են թափան- ցում Եւ պօնացիներին զետեղման խորքերը, աւերում են գրաւած շինութիւնները և բե- րում են բազմաթիւ գերիներ ստանալով ոտներով և ձեռքերով: Տաք հագուստ և նոր օժանդակ զօրքեր սպասվում են Դաւիդից դեկտեմբերի կէսին:

ՍԵՎԱՍՏՊՈԼ, 9 դեկտեմբերի: Լուսաւացի- յունական թագուհին «Ամֆիտրիոս» զբօսա- նաւով ճանապարհ ընկաւ Յունաստան: Ծո- վում սաստիկ փոթորիկ էր, և ցերեկվայ մէկ ժամին զբօսանաւը վերադարձաւ Սեվաստո- պոլ:

ԴԻՆԶԻՆ, 9 դեկտեմբերի: Առաւօտեան ժա- մանց այստեղ սաքսոնական նախկին թագա- ժառանգուհին և իշկանց հիւրանոցում: Նրա խղիւրքը՝ տեսնվել իր երեխաների հետ՝ մերժ- վեց:

ՊԱՐԻՉ, 9 դեկտեմբերի: Առաւօտեան ար- տաքին գործերի միջնորդութեան մէջ կայա- ցաւ Հուլի դէպքի քննիչ յանձնաժողովի ա- ռաշին նիստը: Նիստին ներկայ էին բոլոր միջնորդները, յանձնաժողովը ընտրելով հիւ- գերորդ անգամ աւստրիական ծովապետ Շպա- ունին, յետագից նիստը մինչև դեկտեմբերի 27-ը:

10 դեկտեմբերի

ՏՕԿԻՐ, 9 դեկտեմբերի: (Բէյտէր): Այսօր Պորտ-Արտուրի մօտ եղած բանակի հրամա- նատարը հեռագրել է, որ առաւօտեան ժամը 5-ին աշ սիւնը յետ մղեց ուսանողները բարձ- րութիւնից: Սուսանհանդաօնից դէպի հիւսիս Աղանու ծոցի մօտ և գրաւեց այդ դիրքը: Ժամը 7-ին Եւ պօնացիները գրաւեցին մի ու- րիշ բարձրութիւն թերակղզու վրա Սուսա- նհանդաօնից դէպի արևմուտք, գրաւելով փոքր չափսանի մի թնդանոց: Ռուսները հակա-յար- ձակումը գործեցին, բայց առանց աշողու- թեան:

ՄԻՆԳԱՊՈՒՐ, 9 դեկտեմբեր: (Բէյտէր): Առաւօտեան եկան երկու Եւ պօնական կրէյ- սերներ, որոնք մեկնեցին կէսօրին և նրանց հաղորդեցին, որ մօտերում գտնվում են եւ- պօնական երկու գրաւաւոր, երկու կրէյսէր առաջին կարգի, երկուսը երկրորդ կարգի և 12 ականանաւ: Բոլոր այդ նաւերը գնում են դէպի արևմուտք:

ԲԵՐԼԻՆ, 9 դեկտ. (Բէյտէր): Առևտրական դաշնագիրը Լուսիայի հետ հաստատվեց Եվրո- ցաբիայի կողմից:

Կ. ՊՈԼԻՍ, Դեկտ. 8-ին: Արտաքին գործի իր միջնորդը այցելեց դաշնագրի պետութիւննե- րի գեղապետներին: Լուս երեւոյթին, Բ. Դուռը հակամիտ է զինվորների մակեդոնական ժա- դարմարայի մէջ օտարազգի օֆիցէրներին թի-ւը աւելացնելու հարցի մասին: Լուս լուրերի, Բ. Դուռը պահանջում է տիեզերական պատ- րիարքից Մալոսիկի Օմաստիլի և Կաստօրիի միտապօլիտներին յետ կոչուել, որովհետեւ նրանց անունը վտանգված է Սալոնիկի յու- նական ընդհանուր հիւպատոսի նախկին, գրված յունական չեռայի պարագլխին: Այդ նախկին, որ ընկել է թիւրքերի ձեռքը, տ- լիս է չեռայի պարագլխին ընդհանուր ցուց- մունք և ուղղում է նրանց յիշեալ միտապօ- լիտների մօտ:

ՄՕՍԿՎԱ, 9 դեկտեմբերի: Ներքին գործերի միջնորդութիւնը թղթաւորել է գուժարել Մօսկ- վայում ջրաբաշխային համագումար: Նահան- գական զեմստովն ծրագրում է ընտելութիւն կա- տարել ժողովրդական գրագրականների դրու- թեան և գործունէութեան մասին և գուժարել այդ գրագրականների կառավարիչների համա- գումար:

10 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատար Սիւլինին Բարձրագոյն հը- րամայված է լինել Թիֆլիսի նահանգապետ՝ տալով նրան գնդաւար-մայիօրի աստիճան: «Наша Жизнь» լրագրի վնասակար ուղղու- թեան պատճառով, ներքին գործերի միջնորդը որոշեց յայտնել նրան առաջին նախագրողա- ցումն:

Տամբովում ժողովված 250 անձինք դանա- վան դասակարգեցին դիմելի ներքին գործե- րի միջնորդներին հետեւալ հետադրով: «Յարգո- յարար խնդրում ենք ձեռն առաւաճաւորու- թիւնից արկանել առ ոտս Նորին Կայ- սերական Մեծութեան զանազան դասակար- գերից պատահար Տամբովում ժողովված աւելի քան 250 ուսու անձանց հաւատարմի Կապուտիլութեան զգայունները և նրանց անյողողող հաւատն այն բանում, որ միայն Ինքնակալ Թագաւոր Կայսրը կարող է հանել

